# ԴՐԱՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ IX—XIV ԴԱՐԵՐՈՒՄ

Խ. Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ

*Բագրատունիների թագավորության հաստատման տարիներին դրամային շրջանառությունը Հայաստանում թևակոխել էր իր զարգացման նոր փուլը, որը բնորոշվում է աբբասյան արծաթ դրամների լայն տարածմամբ։ Շրջանառության մեջ այլևս չկային արաբական խալիֆաթի վաղ ժամանակների՝ արաբասասանյան և արաբա-բյուզանգական, ինչպես նաև օմայան դրամները։ Աբբասյաններն իրենց տերության շատ քաղաքներում, այդ թվում և հայկական քաղաքներում, կտրում էին արաբերեն քուֆի գրերով արծաթյա և պղնձյա դրամներ։ Հայերեն գրերով կամ հայ իշխանների անուններով դրամներ չէին թողարկվում։*

*Դրամային հիմնական միավորը արաբատառ արծաթ դրամն էր, որը ապրանքա-դրամային հարաբերություններում միջազգային նշանակություն ուներ։ Պղնձյա դրամները թողարկվում էին տեղական կարիքների համար, և պղինձը սովորաբար քաղաքային կամ նահանգային շուկայի նեղ սահմաններից դուրս չէր անցնում։ Ոսկյա դրամների դրվագումը, ինչպես անցյալում, կատարվում էր սահմանափակ չափերով։ Առևտրական գործարքներում ոսկե դրամը առավելապես հաշվային նշանակություն ուներ։ Ոսկու և արծաթի փոխհարաբերությունը դիտվում էր 1 : 10, երբեմն 1 : 14-ի չափով, ըստ որում, այդ հարաբերությունները կայուն չէին, այլ մշտապես փոփոխական՝ կապված շուկայում թանկարժեք մետաղների գների փոփոխման հետ։*

*Աբբասյանների տիրապետության մեջ Հայաստանը գտնվում էր նրա հյուսիսային սահմաններին մոտ և Արևելքից դեպի Եվրոպա ձգվող քարավանային առևտրի համար կարևոր նշանակություն ուներ։ Ապրանքափոխանակության մղումով, Արևելքի տարբեր քաղաքներից հայկական շուկաներն էին թափանցում աբբասյան արծաթ դրամներ։ Դրանց հետ միասին օտար շուկաներն էին անցնում հայկական քաղաքներում թողարկված աբբասյան արծաթ դրամները։ Դրանք մոտ 26—30 միլիմետր տրամագծով և 2,97 գրամ քաշով ձուլածո արծաթ կլորակներ էին, որոնց վրա նախապես փորագրված հատուկ կնիքներով պրոշմվում էին իսլամի սուրբ գրքից (Ղուրանից) քաղված արաբերեն ասույթներ, ինչպես նաև հիշատակություններ այն մասին, թե երբ, որտեղ և ում անունից կամ հրամանով է թողարկվել տվյալ դրամը։ Արաբական արծաթ դրամի անվանումը Աբբասյանների օրոք չէր փոխվել։ Այն շարունակում էր կոչվել դիրհեմ, սերված արծաթ դրամի հունական ΔΡΑΧΜΗ անվանումից։ Հայերի մեջ դիրհեմը հայտնի էր դրաքմե կամ պարզապես արծաթ դրամ անունով։*

*Հայաստանում աբբասյան դրամների թողարկման ամենաբանուկ կենտրոնը Դվին քաղաքն էր։ Դվինից բացի և նրան զուգահեռ աբբասյան դրամների թողարկումը կատարվում էր Պարտավ (بردعة) և Մծբին نصيبين քաղաքնե-*

ռում, որոնք միջազգային առևտրի նշանավոր կենտրոններ էին, մեկը՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում, մյուսը՝ հարավ-արևմուտքում։ Հայաստանում շրջանառության մեջ էին ոչ միայն տեղական թողարկման արբասյան դրամները, այլև Բաղդատից (مدينة السلام), Մոսուլից, Բասրայից, Քուֆայից, Տուստեր մին-ալ-Ահվազից, ալ-Մուհամեդայից, Ռաս-ալ-Այնից, Ամիդից, Արդերիլից, Շիրազից, Սամարղանդից, աշ-Շաշից և այլ քաղաքներից առևտրի միջոցով բերված արծաթ դրամները։ Դրանք թողարկվում էին Աբբասյանների տիրապետության վաղ ժամանակներից ընդունված միասնական դրամա-կշռային սիստեմի սկզբունքներով։ Աբբասյան դրամների ընդհանուր հոսանքի հետ դեռևս IX դարի վերջերից հայկական քաղաքներում շրջանառության մեջ էին մտել նաև առանձին կիսանկախ կամ ձևականորեն Աբբասյաններից կախված ամիրայությունների դրամները։ Խալիֆաթի տարբեր երկրամասերում նախապես նշանակված առանձին էմիրներ հզորացել էին և անկախության ձգտումով նվաճել էին սեփական դրամ կտրելու իրավունքը Հայաստանում և Ադվանքում, ինչպես նաև Ադրբեջանում, իրենց դրամներով հանդես էին եկել Սաջյան էմիրները։ 905—945 թթ. Սաջյանները թողարկում էին արծաթյա ու ոսկյա դրամներ Դվինում, Պարտավում, ինչպես նաև Արդեբիլում, Մարաղայում և Ռեյում։ Կշռային չափերով և արարերեն արձանագրությունների ընդհանուր ձևավորմամբ Սաջյանների դրամները չէին տարբերվում աբբասյան դրամներից։ Նրանց վրա նույնպես, ինչպես արբասյան դրամների, դրոշմվում էին Ղուրանից քաղված աղոթքի նույն խոսքերն այն մասին, թե չկա աստվածություն բացի Ալլահից, և գոյություն չունի նրան հավասար որևէ մեկը, ինչպես նաև այն, որ Մուհամմեդը Ալլահի առաքյալն է, և թե Ալլահն ուղարկել է նրան (Մուհամմեդին), որպեսզի այդ հավատը հաղթող դարձնի բոլոր այլ հավատների հանդեպ, հակառակ կռապաշտների դիմադրության և այլն, և այլն։ Աբբասյանների տիրապետության վաղ ժամանակներից ավանդույթ դարձած այդ ասույթները պահպանելով հանդերձ, Սաջյանները, սակայն, իրենց դրամների վրա հիշատակում էին նաև ժամանակակից խալիֆի պատվանունը և Սաջյան տոհմից այն իշխողի անունը, որի օրոք դրվագվել էր տվյալ դիրհեմը կամ դինարը։ Հայաստանում թողարկված սաջյան ոսկյա դրամներից մեկ հայտնի ամենավաղ օրինակը վերաբերում է հիջրայի 300 (=մեր 912—913) թ. և կրում է իր վրա Յուսուֆ իբն Դիվդադի անունը։ X դարի առաջին կեսին Հայաստանում շրջաբերվում էին նաև էմիր Վասիֆի աս-Սիրավանու, Մուֆլիհ ալ-Յուսուֆի, Մուհամմեդ իբն Արդառազակի, Դասյամ իբն Իբրահիմի և այլ էմիրների ոսկյա ու արծաթյա դրամները։

X դարի երկրորդ կեսից շրջանառության մեջ նշմարվում էին նաև Սալլարյան էմիրների, մասնավորապես ալ-Մարզբան իբն Մուհամմեդի, Ջաստան իբն ալ-Մարզբանի, Իսմայիլ իբն Վասհուդանի և այլոց Արդեբիլում, Պարտավում, Մարաղայում 952—965 թթ. դրվագած ոսկյա ու արծաթյա դրամները։ Սակայն առևտրի հայկական շուկաներում լայնորեն տարածված արբասյան դիրհեմների հոծ զանգվածում սաջյան և սալլարյան դրամները չէին առանձնանում, այլ ընդունվում էին աբբասյան հին ու նոր դրամների հետ միասին։ Հայաստանում, Ադվանքում, Ադրբեջանում, Սիրիայում, Իրաքում և Արևելյան խալիֆաթի այլ երկրամասերում Աբբասյանների և նրանց ենթակա էմիրների կողմից թողարկված արծաթյա դրամները միջազգային առևտրի շնորհիվ դուրս

էին գալիս իրենց ծագման վայրերից և թափանցում հեռավոր շուկաներ։ Այն են վկայում Ռուսաստանում, Մերձբալթյան երկրներում, Ֆինլանդիայում, Շվեդիայում, Լեհաստանում, Գոտլանդ կղզում, Դանիայում, Գերմանիայում, Անգլիայում ու Եվրոպական այլ երկրներում գտնված արծաթյա դրամների դան-



Աբբասյան արծաթ դրամներ, IX—X դարեր։

ձերը։ Դրանց մեջ հայտնաբերվել են արծաթ դրամներ, որոնք VIII—X դարերում կտրվել էին Դվինում, Պարտավում, Բիթլիսում, Մանազկերտում, Մծբինում, Մարդինում, Ամիդում, Թիֆլիսում, Դերբենտում և շատ այլ քաղաքներում։

Միջազգային առևտուրը արաբական արծաթ դրամները Հայաստան էր բերում և շրջանառության ընդհանուր հոսանքով Եվրոպա էր տանում երեք հիմնական ուղղություններով։ Առաջին ուղղությունն էր՝ Իրաքից, Սիրիայից, Միջագետքից դեպի Հայաստան և Հայաստանի վրայով դեպի Կասպից ծով ու այնուհետև Վոլգայի ավազանով դեպի հյուսիս-արևմուտք։ Մերձվոլգյան շրջաններում այդ հոսանքը բաժանվում էր երկու ճյուղի, որոնցից մեկը ուղղվում էր դեպի բալթյան երկրներ ու Գոտլանդի վրայով հասնում Սկանդինավիա, իսկ

մյուսը թեքվում էր Արևմուտք և Դնեպր—Վիսլա սիստեմով հասնում առևտրի գերմանական շուկաները։ Երկրորդ հոսանքը Հայաստան էր գալիս Իրանից և ձգվում էր դեպի Դերբենտ (Բաբ-ալ Վաբ) ու Կասպից ծովից Վոլգայով թեքվում Դոնի ավազանը։ Այս երկրորդ հոսանքը փոխանցվում էր Դնեպրի սիստեմը ու նրանով տարածվում դեպի հյուսիս։ Երրորդ ուղղությամբ արաբական դրամները Հայաստան էին թափանցում Իրանի հարավային ու արևելյան երկրամասերից և միավորվելով Իրաք—Սիրիայից դեպի Փոքր Ասիա ձգվող հոսանքին, Սև ծովի վրայով մտնում էին Դնեպրի ավազանը, ճանապարհին կապվում առաջին և երկրորդ հոսանքների հետ։ Դրամային գանձերի տեղադրության այս տվյալներով արտացոլվում են Հայաստանի միջազգային կապերի գլխավոր ուղղությունները IX—X դարերում։ Պատահական չէ, որ Իրանից և Հայաստանից դեպի հյուսիս, Կասպից ծովի ու Վոլգայի վրայով մինչև Սպիտակ ծով ձգվող քարավանային ճանապարհը հետագայում հայտնի էր դարձել «Մեծ հայկական ճանապարհ» անունով։

Սակայն X դարի վերջերին և հատկապես XI դարի սկզբից փոխվել էր Հայաստանի դրամային շրջանառության կազմը։ Նախ արծաթյա դրամների թարմ հոսանքը նվազել էր և նոր թողարկված արծաթյա դրամներն այլևս չունեին արծաթի պարունակության անցյալի բարձր որակը։ Դրանց մեջ արծաթը ներկայացված էր հատածույլի միայն մակերեսային շերտով։ Հայաստանում և Աղվանքում պղնձի խառնուրդով ցածր որակի արծաթ դրամներ էին թողարկում Շեդդադյանները, որոնք XI դարում տեր էին դարձել Անի, Դվին և Գանձակ քաղաքներին։

Արծաթի սղությունը XI դարի սկզբից նկատվում էր արևելյան շատ երկրներում։ Այն ծայր էր առել Միջին Ասիայից և աստիճանաբար տարածվել դեպի արևմուտք։ Շուրջ երկու հարյուր տարվա տևողությամբ պետությունները թողարկում էին կա՛մ զուտ պղնձյա դիրհեմներ, կա՛մ արծաթի ընչին պարունակությամբ «արծաթ» դրամներ։ Դրսևորվել էր արծաթի ճգնաժամ, որի առաջին արտացոլումը Հայաստանում Շեդդադյանների 951—1076 թթ. դրվագած խիստ ցածր որակի արծաթ դրամներն էին։ Դրանք թողարկվում էին գլխավորապես Գանձակում։ Նրանց վրայի արարատառ արձանագրությունները, մինչ այդ եղած իսլամական դրամների նման, մուսուլմանական հավատի դոգմատիկ ասույթների հետ միասին հիշատակում էին Շեդդադյան էմիրների տիտղոսները ու անձնանունները։ Սակայն լինելով վատորակ արծաթից, շեդդադյան դիրհեմներն արտաքին առևտրի մեջ ընդունելություն չունեին, նրանց շրջանառությունը Շեդդադյանների տիրապետության սահմաններից դուրս չէր անցնում։

XI դարի սկզբից միջազգային առևտրի մեջ տիրապետող էին դարձել բյուզանդական ոսկյա դրամները։ Ներքին շուկայի համար լայն տարածում էին ստացել բյուզանդական պղնձյա դրամները։ Ի տարբերություն շեդդադյան դրամների, բյուզանդական ոսկյա և պղնձյա դրամները Հայաստանում հայտնաբերվում են ոչ միայն առանձին օրինակներով, այլև ամբողջական գանձերի ձևով։

Արծաթի սղությունը բացահայտ իրողություն էր նաև Բյուզանդիայի մեջ, որի դրամային սիստեմում դրսևորվել էր բիմետալիզմ՝ ոսկու և պղնձի բացարձակ առավելությամբ։ Բյուզանդական ոսկուց Հայաստանում շատ հաճախ են գտնվում Կոստանդին VIII (1025—1028), Կոստանդին X (1059—1067) և Ռոմանոս IV (1067—1071) կայսրերի թողարկած դրամները։ Նրանց պահպան-

ված օրինակների միջին քաշն է 4,20—4,40 դրամ ոսկի, որով և ընդհանուր ներդաշնակություն է նկատվում Արևելքում քրիստոնեական և մուսուլմանական ոսկե դրամների կշռային չափերի միջև։

Բյուզանդական ոսկյա դրամները շրջանառության մեջ անմիջապես նանաչվում էին իրենց պատկերներով։ Նրանց մի կողմի վրա, որպես կանոն, դրոշմված էր Հիսուս Քրիստոսի պատկերը, հանդիպահայաց, երբեմն գահի վրա բազմած։ Մյուս կողմից կայսեր պատկերն էր, շուրջը հունարեն արձանագրություններով։ Ռոմանոս IV-ի ոսկյա դրամների վրա պատկերված էին լինում կայսեր և կայսրուհու օծումը Քրիստոսի կողմից, ինչպես նաև կայսեր ժառանգները՝ Միքայելը, Կոստանդինը և Անդրոնիկոսը՝ իրենց անձնանունների հիշատակությամբ։

Բյուզանդական դրամների վրայի պատկերները չունեին պատկերվող անձանց անհատականություններին բնորոշ գծեր։ Դրանք արվում էին սխեմատիկ ձևով։ Հայաստանում գտնված բյուզանդական ոսկյա դրամները դրվագված են կայսրության մայրաքաղաքում՝ Կոստանդնուպոլսում։ XI դարի սկզբին նրանց հատաձույլ կլորակները ունեին հարթ մակերես (25—28 միլիմետր տրամագծով), սակայն հետագայում դարձան մի կողմից ուռուցիկ, մյուս կողմից՝ գոգավոր և էլեկտրիումի խառնուրդից այլևս չունեին վառ պայծառ գույն, այլ դարձել էին դունատ ոսկի, ինչպես նրանց հաճախ անվանում էին։

Բյուզանդիայում այդօրինակ ոսկյա դրամները հայտնի էին Նոմիսմա (NOMISMA) անունով։ Հայաստանում դրանց անվանում էին «բիզանդ» կամ «դահեկան», «ոսկի դահեկան» և կամ «ոսկի բյուզանդ»։

Բագրատունիների տիրապետության մեջ շատ տարածված էին նաև բյուզանդական պղնձյա դրամները։ Շիրակում և Այրարատում հազիվ թե նշվեն շրջաններ, ուր բյուզանդական պղնձյա դրամներ գտնված չլինեն։ Դրանք շրջանառության մեջ են մտել Հովհաննես I Զմշկիկի, Կոստանդին VIII-ի, Ռոմանոս III-ի, Միքայել VI-ի, Կոստանդին X-ի և վերջինիս հաջորդների կայսրության տարիներին։

Առևտրի հայկական շուկաներում X դարի վերջերից և XI դարի ընթացքում ամենատարածված պղնձյա դրամը հանդիսանում էր Հիսուս Քրիստոսի պատկերով բյուզանդական պղնձյա դրամը։ Դրանք թողարկվում էին առանց որևէ թագավորական անվան հետ կապվելու։ Նրանց վրա չէր նշվում որևէ տարեթիվ, ինչպես նաև որևէ տեղանուն։ Այդ անանուն և անտարեթիվ պղնձյա դրամների վրա չորս տողով, հունարեն խոշոր տառերով գրված էր, որ Հիսուս-Քրիստոսն է թագավորների թագավորը

(+ IHSYS ‖ XRISTYS ‖ BASILEY ‖ BASILE)

Բյուզանդիայում պղնձյա դրամն անվանում էին ֆոլլիս (φόλλις), որից և սերված են հայերեն «փող», պարսկերեն «փուլ» پول, արաբերեն ֆելս فلس անունները։ Դրանք բոլորն էլ նշանակում էին մանր դրամ տեղական առուծախի համար։ Բյուզանդական ֆոլլիսը կազմում էր սիլիքվա կշռային միավորի $^1/_{24}$ կամ միլիարիսի Μιλιαρήσιον $^1/_{12}$ մասը։ Պղնձյա այդ անանուն դրամների հատաձույլ կլորակներն ունեին մոտ 25—30 միլիմետր տրամագիծ և միջին հաշվով 7-ից 12 դրամ ծանրություն, թեև հաճախ շեղվում էին հիշյալ չափերից։ Անիում այնքան շատ են գտնվել Քրիստոսի պատկերով X—XI դարերի



*Բյուզանդական ոսկի դրամներ, XI դար։*

պղնձյա այդ դրամներից, որ բացահայտ է դառնում նրանց ունեցած կարևոր դերը ներքին շուկայում։

Տարաբախտաբար, այդ դրամների վրա չէր նշվում փողերանոցի անունը։ Սակայն շրջանառության դարավոր փորձից հայտնի է, որ պղնձյա դրամներն արտաքին առևտրի հետ չէին առնչվում և ներքին շուկայի սահմաններից դուրս չէին անցնում։ Հետևաբար, հազիվ թե այդպիսիները բերված լինեին Հայաստան միմիայն կայսրության կենտրոնից։ Հավանական է, որ դրանք թողարկվում էին նաև Հայաստանում, մասնավորապես Անի քաղաքում, նամանավանդ երբ վերջինս 1045 թ. անցել էր բյուզանդացիների ձեռքը։ Հիրավի, Հայաստանում գտնված բյուզանդական պղնձյա դրամների մեծ մասը թողարկման ժամանակով վերաբերում է XI դարի երկրորդ կեսին։ Իրենք՝ Շիրակի Բագրատունյաց հայ թագավորները, հայերեն գրերով դրամներ չեն թողարկել։ Արևելքի դրամագիտական նյութի մեջ այդպիսիները գոյություն չունեն։ Միակ վկայությունը, որ կա վերաբերում է ոչ թե Շիրակի, այլ Բագրատունյաց Լոռվա թագավորությանը։ XI դարի երկրորդ կեսին, երբ վերացել էր Շիրակի հայոց թագավորությունը, Տաշիր-Ձորագետի Բագրատունյաց ճյուղի Կորիկե թագավորը իր անունից թողարկում էր պղնձյա դրամներ։ Տարաբախտաբար, այդ դրամները պահպանվել են հատ ու կենտ նմուշներով։ Սակայն դրանք հայերեն արձանագրությամբ այն բացառիկ դրամներն են, որոնք թողարկվել են Մեծ Հայքում Մեսրոպ Մաշտոցի հայերեն գրերի գյուտից հետո։ Այդ արտակարգ վկայությունը ուշագրավ է ոչ միայն դրամագիտական առումով, այլ նաև հայ-բյուզանդական առնչությունների տեսակետից։ Նրանց մի կողմի վրա պատկերված է Հիսուս Քրիստոսը, հանդիպահայաց, մինչև կուրծքը, գլուխը լուսապսակի մեջ։ Քրիստոսի ուսերից վերև նշված են կրճատ ձևով հայերեն ՀՍ-ՔՍ (Հիսուս Քրիստոս), իսկ հակառակ կողմի վրա հինգ տառով արձանագրված է. ՏԷՐ ՕԳՆԷ ԿՈՐԻԿ//ԷԻ ԿՈՐԱՏ//ՊԱՂԱ//ՏԻՆ և այդ ամենը վերցված է կետավոր շրջանակի մեջ։ Դրամի հաստաձույլ կլորակներն ունեն մոտ 22—24 միլիմետր տրամագիծ և 5—7 գրամ ծանրություն։ Արձանագրությունը X—XI դարերին բնորոշ կրոնական մաղթանք է. «ՏԷՐ ՕԳՆԷ ԿՈՐԻԿԷԻ ԿՈՐԱՏՊԱՂԱՏԻՆ»։ Ուշագրավ է, որ Կորիկեն ներկայացված է իր բյուզանդական տիտղոսով՝ «Կորատպաղատ», որը շնորհվում էր կայսրության կողմից։ XI դ. այդ տիտղոսով՝ [illegible] հանդես էին գալիս նաև Բյուզանդիայից վասալական կախման մեջ գտնվող վրաց Բագրատունյաց թագավորները։

Դրամի վրա Հիսուս Քրիստոսի պատկերն արտահայտում էր նաև դավանանքի այն միասնությունը, որ կար քրիստոնեական Բյուզանդիայի և Հայոց թագավորության միջև[1]։

Հանդիպահայաց տեսքով Քրիստոսի պատկերն ընդօրինակված էր Հայաստանում այնքան շատ տարածված X դարի բյուզանդական դրամներից։ Սակայն Լոռվա հայոց թագավորության այդ դրամները բյուզանդական ու մուսուլմանական դրամների հոծ զանգվածում շատ աննշան էին։ Մինչև XI դարի

[1] Քրիստոսի պատկերով ազգային դրամներ, հաճախ երկլեզվյան արձանագրություններով վրացերեն և հունարեն, թողարկվում էին Վրաստանում, Բագրատունյաց վրաց ճյուղի Բագրատ IV, Գեորգի և Դավիթ Շինարար թագավորների իշխանության տարիներին։ Վրաց թագավորության արծաթ դրամները շուրջ հարյուր տարվա ընթացքում՝ Դավիթ Կյուրապաղատից մինչև Դավիթ Շինարարը, կորցրել էին իրենց քաշը, և միավորը 3 գրամից զարձրել էր 1,5 գրամ։

վերջը նրանք Հայաստանի տնտեսության համար էական նշանակություն չունեցան։

XII դարի սկզբից դրամային շրջանառությունը Հայաստանում թևակոխում է իր զարգացման նոր փուլը։ Այն բնորոշվում է արծաթի բացակայության պատճառով երկրի դրամային տնտեսության մեջ իշխող բիմետալիզմով (երկմետաղությամբ)։ Արծաթը վերացել էր ասպարեզից։ Ներքին շուկայում առևտուրը վարվում էր պղնձյա դրամներով, իսկ ապրանքափոխանակության արտաքին գործարքներում հանդես էին գալիս առավելապես բյուզանդական և սելջուկյան ծագում ունեցող ոսկյա դրամները։ Շրջանառության մեջ ոսկյա դրամներն ընդունվում էին քաշով, եթե նկատի ունենանք, որ տարբեր կշռա-

Բագրատունյաց Լոռվա թագավորության հայատառ պղնձյա դրամը, XI դար։

յին սիստեմների դրամային միավորները ունեին քաշի տարբեր տվյալներ և չէին կարող հատ հաշվով հանդես գալ։ Արծաթի չքացումը երևում է ոչ միայն այն փաստից, որ փողերանոցները արծաթ դրամներ չէին թողարկում, այլ ընդհանրապես XII դարից մեզ չեն հասել արծաթյա կենցաղային առարկաներ, զարդեր ու զարդարանքներ, եկեղեցական սպասքներ։ Այդ երևույթը, որ ծայր էր առել XI դարում Արևելյան Իրանում, արդեն XII դարում բացահայտ էր դարձել Հայաստանում և մերձավոր երկրներում։

Աշխարհագրական լայն ընդգրկումով հանդես եկած քաղաքատնտեսական այդ իրողության ծագման պատճառները մինչև օրս գտնված չեն։ Դոյություն ունեն տարբեր մեկնաբանություններ, սակայն դրանցից և ոչ մեկը չի տվել հարցի վերջնական լուծումը։ Հայ պատմիչներից Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկ) հաղորդում է, որ Բաղդատում թողարկվում էին ցածր որակի արծաթե դրամներ՝ արճիճի և պղնձի խառնուրդով։ Ավելին, Ասողիկը հիշատակում է, որ ասպարեզ էին մտել կաշուց և անգամ կավից դրամներ[2]։ Թողնելով արծաթի ճգնաժամի հարցը առանձին քննության, մենք կարող ենք նշել, որ Հայաստանում, XII դարում, ներքին առևտուրը վարվում էր պղնձյա իլդեգիզյան և դրանց հետ միասին սելջուկյան ծագման պղնձյա այլ դրամներով։ Նախապես լինելով Իրաքի Սելջուկյանների վասալները, Իլդեգիզյանները XII դարում չափազանց հզորացել էին և նվաճել ոչ միայն Ադվանքը, այլև Խուզիստանից մինչև Վրաստան, ու Հայաստանի հյուսիսային շրջանները հաճախ ենթակա էին լինում նրանց իշխանությանը։ Հայաստանում շրջանառության մեջ են եղել

[2] Ստեփանոս Տարոնեցի, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 195։

Շեմս-ադ-Դին Իլդեգիզի և նրա տոհմի բոլոր ներկայացուցիչների՝ Նուսրատ ադ-դին Մուհամմեդ Ջահան-Պահլեվանի, Մուզաֆար ադ-դին Օսման Կիզիլ Առսլանի և Աբու-Բեկրի պղնձյա դրամները։

Հարկ է նկատել, որ Իլդեդիզյանները թողարկում էին երկու տեսակի պղնձյա դրամներ՝ կանոնավոր կերտվածքի և քիչ թե շատ կայուն քաշի և անկանոն ձևի ու խայտաբղետ կշռային չափերի պղնձյա դրամներ։ Առաջինները վարկային նշանակություն ունեին արծաթը փոխարինելու համար և ընդունվում էին հատ հաշվելով, իսկ երկրորդները ընդունվում էին կշեռքի միավորներով։

Հայաստանում, մասնավորապես նրա հյուսիս-արևելյան շրջաններում, լայն տարածում են ունեցել կանոնավոր կերտվածքի իլդեդիզյան պղնձյա դրամները։ Դրանք վերաբերում են առավելապես XII դարին։

Իլդեգիզյանների փողերանոցները գործում էին Թավրիզում, Արդեբիլում և Շամխորում։ Դվինի միջնաբերդում և նրա ավերակների ողջ տարածքի վրա իլդեդիզյան դրամները հայտնաբերվել են դանձերով և շատ առատորեն առանձին նմուշներով՝ XII դարի նյութերի հետ կապված։

XII—XIII դարերում ապրանքային արտադրության, արհեստների ու առևտրի զարգացումը պահանջում էր դրամների մասսայական թողարկում։ Մուսուլմանական դրամների վրա նշված արաբերեն արձանագրությունների իմաստը փոխվել էր։ Դրանք դարձել էին խիստ հակիրճ։ Իսլամի շաբլոն դարձած խոսքերը այլևս շատ չէին հիշատակվում։ Այսպես, օրինակ, եթե վաղագույն թողարկման իլդեդիզյան դրամների վրա, մասնավորապես իրեն՝ Աթաբեկ Իլդեգիզի դրամների վրա, դեռևս այդ կար, ապա նրա հաջորդները բոլորովին հրաժարվել էին իսլամի աղոթք դարձած ասույթներն արձանագրելուց և դրամների վրա նշում էին միայն Իրաքի Սելջուկյան սուլթանների և իրենց անուններն ու տիտղոսները։ Արդեն Իլդեդիզյան Աբու Բեկրի (1191—1210) իշխանության տարիներին դրամները թողարկվում էին միայն Աթաբեկի անունից և նրանց վրա երբեմն հիշատակվում էին ժամանակակից խալիֆի անուն, որը դարձել էր իսլամի հոգևոր հայրը (ալ-իմամ) զուտ ձևական առումով։ Ուշագրավ է, որ Իլդեգիզյանները օգտագործում էին նաև Հայաստանում եղած պղնձյա բյուզանդական դրամները։ Դրանց վրա նրանք խփում էին իրենց կնիքը և այդ ձևով նախկին բյուզանդական պղնձյա դրամները շրջանառության մեջ էին մտնում որպես իլդեդիզյան դրամներ։ Կրկնադրոշմ պղնձյա այդ կարգի դրամների վրա կարդացվում էր «Փառք Ալլահին» الحمد لله արաբական դարձվածքը կամ միայն Աթաբեկի անուն։

Ի տարբերություն հյուսիսային քաղաքների, Հայաստանի հարավային և արևմտյան մասերում առևտուրը XII դարում վարվում էր Դանիշմենդյանների, Մանգուջակյանների, Սալդուկյանների, Արմենշահերի, Օրտուկյանների, Զենգյանների և Էյուբյանների պղնձյա դրամներով։ Սեբաստիա, Մալաթիա, Երզնկա և այլ քաղաքներում թուրքմենական ծագում ունեցող Դանիշմենդյանները թողարկում էին պղնձյա դրամներ Հիսուս Քրիստոսի և երբեմն նաև Աստվածամոր պատկերով։ Այդ դրամների վրա հունարեն տառերով արաբերեն բառեր էին արձանագրում՝ նվիրված Դանիշմենդյաններին։ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում XII դարում տարածված սելջուկյան դրամները ուշագրավ են թե՛ նրանով, որ լինելով բացառապես պղնձից, արտացոլում են արծաթի ճգնաժամը, և թե իրենց պատկերատիպերի նշանակությամբ։ Իսլամի

քարացած դոգման, որով դարեր շարունակ արդելված էր դրամների վրա մարդկային կամ կենդանական պատկերներ դրոշմելը, վերացվել էր։ Վերածնվել էին անցյալում շրջանառության մեջ եղած հունա-հռոմեական, սասանյան, բյուզանդական դրամների վրա եղած պատկերները։ Այսպես, օրինակ, Մալաթիայում Դանիշմենդյան Մուհամմեդ Զուլկարնայնը 1162 թ. պղնձյա դրամներ էր թողարկում մարդկանց ու կենդանիների պատկերներով, որոնց շարքում նշանավոր էին Աստվածամոր պատկերով դրամները։ Սալդուկյանները, որոնք հաստատվել էին Կարնո մեջ, պղնձյա դրամներ էին թողարկում սուրբ Գևորգի կամ աշխարհիկ բնույթի պատկերներով ու արաբերեն արձանագրություններով։ Երզնկայում Մենգուջակյաններից Ֆախր ադ-դին Բահրամ շահը 1185 թ. պղնձյա դրամներ էր թողարկում արքայական դիմաքանդակի դրոշմով և արաբատառ արձանագրությամբ, սակայն առանց իսլամի աղոթք դարձած խոսքերի։ Խլաթում Շահարմենների Բեկթեմուրը 1182 թ. արաբատառ պղնձյա դրամներ էր թողարկում, որոնց վրա դրոշմված էր Սելևկյան Անտիոքոս Մեծի դրամներով այնքան տարածված մայր ձիու պատկերը։ Հաճախ այդ պատկերները այլաբանական իմաստ ունեին՝ աստղագիտական նշաններ կամ երկնային մոլորակներ էին արտահայտում։ Այսպես, օրինակ, Հայաստանի ծայրագույն հարավ-արևմուտքում Օրտուկյանները դրամներ էին դրվագում Մարս մոլորակի պատկերով։ Մարսը ներկայացված էր որպես ահեղ տիրակալ, ծալապատիկ նստած, մի ձեռքին սուր, իսկ մյուսին՝ մարդու կտրած գլուխը։ Սակ ուրիշ դրամի վրա պատկերված էր Աղեղնավորի համաստեղությունը ձիամարդու (կենտավրոս) կերպարանքով, որը աղեղից նետ էր արձակում վիշապի վրա։ Այդպիսի պատկերներով Օրտուկյանները սաստում էին իրենց դեմ ելնողներին։ Նման պատկերներից բացի նրանք դրամների վրա արաբերեն արձանագրությամբ հայտարարում էին. «Թող նզովված լինի նա, ով կհանդգնի կեղծել այս դրամը»։ Հիրավի, այդ կոչականը անհիմն չէր, պաշտոնապես թողարկված դրամները հաճախ կեղծվում էին։ Բյուզանդական կայսրեր Հերակլեսի և Հերակլես-Կոստանդինի պատկերներով 1182 թ. Օրտակյան Կուտբ ադ-դին Իլ-Ղազիի դրամների վրա արաբերեն արձանագրված էին սպառնալիքի և նզովքի հիշյալ խոսքերը։

Գեղարվեստի առումով XII դարի այդ պատկերները չունեին այն կատարելությունը, որ բնորոշ էր նրանց նախատիպը հանդիսացող հունա-հռոմեական և կամ բյուզանդական դրամներին։ Կարևորը այն իրողությունն էր, որ վերածնվել էին անցյալից հայտնի պատկերները։ Թեև դրամները պղնձից էին, սակայն առանձին օրինակների վրա արաբերենով պարզ գրված էր արծաթե դրամի անունը՝ դիրհեմ։ Սելջուկյան նմանօրինակ պղնձյա դիրհեմները շրջանառության մեջ էին Նփրկերտ, Կարին, Խլաթ, Արճեշ, Բերկրի, Մանազկերտ, Երզնկա քաղաքներում և նրանց մերձավոր շուկաներում։ Այրարատում, Շիրակում, Սյունիքում և ընդհանրապես Կուր-Արաքսի գետամիջում դրանք լայն տարածում չեն ունեցել։

Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերում XII դարի վերջերին նշանակալից են դառնում վրացական դրամները։ Բագրատունյաց տոհմը Վրաստանում ստեղծել էր միասնական թագավորություն, որը ամրապնդվել էր դեռևս Դավիթ Շինարարի (1089—1125) թագավորության տարիներին, ոչ միայն արտաքին թշնամիների, այլև երկրի ներսում կենտրոնախույս ազնվականների դեմ տարած հաղթանակների շնորհիվ։ Արդեն Թամար թագուհու (1184—1213) ժա-

մանակ Վրաստանը հանդես էր գալիս որպես Սելջուկյաններից անկախ երկիր։ Վրաց թագավորներն ունեին իրենց սեփական դրամները։ Դրանք թողարկվում էին բացառապես պղնձից և ունեին երկլեզվյան՝ վրացերեն և արաբերեն կամ երբեմն վրացերեն ու պարսկերեն արձանագրություններ։ Հայաստանում, հատկապես նրա հյուսիս-արևելյան կողմերում, XII դարի վերջերից շրջանառության մեջ են մտնում վրաց Գեորգի III (1156—1184) թագավորի դրամները։ Վերջիններիս մի երեսին պատկերված էր ինքը՝ վրաց արքան, ծալապատիկ նստած, գլխին թագ, ձեռքին արծիվ և շուրջը վրացերեն գրված նրա անունը և դրամի թողարկման տարեթիվը։ Դրամի մյուս երեսին արաբերեն արձանագրված էր. «Թագավոր թագավորաց Գեորգի որդի Դիմիտրի, սուրբ Մեսսիայիս»։

Հետագայում՝ XIII դարի սկզբից, առավել լայն տարածում են գտնում Թամար թագուհու և նրա երկրորդ ամուսնու՝ Դավիթ Սոսլանի դրամները։

Շրջանառության մեջ դրանք անմիջապես ճանաչելի էին իրենց մի կողմի վրա ունեցած Բագրատունյաց տոհմանշանի դրոշմով։ Նրանց վրա արաբերեն արձանագրված էր. «Թագուհիների թագուհի, երկրի և կրոնի վեհություն՝ Թամար, Դուստր Գեորգիի, Մեսսիայի երկրպագուհի»։ Վրացերեն գրերով հիշատակված էին Թամարի և Դավթի անունները, ինչպես նաև դրամի թողարկման տարեթիվը։ Արծաթի բացակայության պայմաններում վրաց Բագրատունիները Իլդեգիզյանների նման թողարկում էին կանոնավոր և անկանոն կերտվածքի պղնձյա դրամներ։ Առաջինները վարկային նշանակություն ունեին արծաթի փոխարեն և ընդունվում էին հատ հաշվով։ Մինչդեռ անկանոն կերտվածքի (ոչ կլոր) և խայտաբղետ քաշի պղնձյա դրամները առևտրում ընդունվում էին բաշով։ Անի քաղաքի և Գառնի ամրոցի հնագիտական պեղումներից հայտնաբերված դրամագիտական նյութերը վկայում են, որ Թամար թագուհու օրոք Բագրատունյաց տոհմային նշանով կանոնավոր կերտվածքի վրացական պղնձյա դրամները լայն տարածում են ունեցել Հայաստանում։ Վրաց կաթողիկոս Եպիփանեսը հաղորդում է, որ 1218 թ. Անի քաղաքում եկեղեցական հարկերը գանձվում էին «Թբիլիսյան» դրամներով[3]։ Վերջիններս, ամենայն հավանականությամբ, Հայաստանում շատ տարածված Թամար թագուհու պղնձյա կանոնավոր կերտվածքի դրամներն էին։

XIII դարի երկրորդ քառորդի վերջում Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերում շատ աննշան թափանցել էին Թամարին հաջորդող Գեորգի Լաշայի (1213—1222) և Խորեզմի շահ Ջալալ ադ-դինի պղնձյա դրամները։ Ջալալ ադ-դինի դրամները թողարկվել էին Թիֆլիսում հիջրայի 623 (=մ. թ. 1226) թ. և չնայած պղնձից էին, բայց իրենց վրա, արաբատառ արձանագրությամբ, ունեին արծաթ դրամի անունը՝ դիրհեմ درهم այսինքն՝ հանդես էին գալիս արծաթ դրամի փոխարեն։ Մոնղոլական արշավանքներից հալածված սուլթան Ջալալ-ադ-դին Մանգուբերդին զորքով մտել էր Վրաստան և տեղի վրացական դրամների վրա դրոշմել էր իր անունը։ Ջալալ-ադ-դինի արաբատառ այդ դրամների վրա հաճախ երևում էին նախկինում եղած վրաց դրոշմի հետքերը։

Հայաստանում տարածված վրացական դրամների վերջին խումբը Ռուսուդան թագուհու (1222—1245) պղնձյա դրամներն էին։ Դրանց վրա մի կողմից վրացերեն գրված էր Ռուսուդանի անունը և քրոնիկոնի 447 (=մ. թ. 1227

[3] Д. Г. Капанадзе, Грузинская нумизматика, М., 1955, էջ 68։

տարեթիվը, իսկ մյուս կողմից արաբերեն գրոշմած էր. «Թագավորների ու թագուհիների թագուհի, երկրի, պետության և հավատի վեհություն, Թամարի դուստր Ռուսուդան, Մեսսիայի երկրպագուհի, թող աստված բարձր պահե նրա հաղթանակները»։ Շրջանառության մեջ դրանք հանդես էին գալիս իրենց իրական դերով, որպես պղնձյա դրամներ։ Այդ ժամանակ արդեն վերացել էր «արծաթի ճգնաժամը», և պետությունները նորից սկսել էին թողարկել իսկական արծաթ դրամներ։ Դարավոր ընդմիջումից հետո Արևելքի միջազգային շրջանառության մեջ վերականգնվել էր արծաթ դրամի՝ որպես դրամային հիմնական միավորի գործառնական նշանակությունը։

Արծաթ դիրհեմի կշռային չափը չէր փոխվել։ Այն թողարկվում էր նույն քաշով՝ 2,97 գրամ, ինչպես որ անցյալում սահմանված և հայտնի էր դեռևս մինչ արծաթի ճգնաժամը։

XIII դարի 30-ական թթ. դրամային շրջանառությունը Հայաստանում թևակոխում էր իր զարգացման նոր փուլը, որ բնորոշվում էր մոնղոլական արծաթ դրամների լայն տարածմամբ։ Հայաստանում գտնված վաղագույն մոնղոլական արծաթ դրամները վերաբերում են 1232—1233 թթ.։ Դրանք չինգիզյան դիրհեմներ էին, թողարկված Չինգիզի որդի Ուգեդեյ խանի գերագույն իշխանության տարիներին, սակայն առանց նրա անվան հիշատակության։ Այդ անանուն արծաթե դրամների վրա արաբերեն գրոշմած էին մի կողմից մոնղոլական գերագույն տիրակալի «արդարադատ» անվանումը, իսկ մյուս կողմից՝ մուսուլմանական հավատի խոսքերը։ Արաբատառ գրություններից բացի այդ դրամների վրա նշված էր մոնղոլական զինանշանի՝ աղեղի պատկերը։ Մոնղոլների վարչական բաժանմամբ Հայաստանը և հարևան երկրամասերը (Վրաստան, Ադրբեջան, Դիարբեքիրի մարզը) մտել էին մոնղոլական հինգերորդ ուլուսի մեջ։ Մինչև 1260 թ. այդ ուլուսը կառավարվում էր մոնղոլական փոխարքայի կողմից, որը կոչվում էր ուլուս-բեկ։ Վերջինիս վարչական կենտրոնը գտնվում էր Թավրիզում, իսկ փողհարանոցները գործում էին ոչ միայն Թավրիզում, այլև Բայլականում, Գյանջայում, Թիֆլիսում և այլուր։ Թողարկվում էին դիրհեմներ և նրանց կես մասը կազմող միավորներ։ Դիրհեմներից պահպանված օրինակները կշռում են 2,74—2,83 գրամ արծաթ։

XIII դարի 40-ական թթ. շրջանառության մեջ են մտնում նոր պատկերատիպի չինգիզյան արծաթ դրամներ, թողարկված Ուգեդեի մահից հետո նրա այրու՝ Թուրակինա խաթունի (1241—1245) իշխանության տարիներին։ Դրանց մի կողմի վրա պատկերված է ձիավոր, որը իր աղեղից նետ է արձակում հեռվում երևացող թռչունի վրա, իսկ վերևից արաբատառ թուրքերենով արձանագրված է. الخ منقل الوس بك «Մեծ մոնղոլական Ուլուս բեկ»։ Մյուս կողմից չորս տողով արաբերեն գրոշմված են մուսուլմանական հավատի խոսքերը, ինչպես նաև դրամի թողարկման տարեթիվն ու քաղաքի անունը։ Հայաստանում շրջանառության մեջ էին մտել արծաթ դրամներ, որոնց վրա մուսուլմանական հավատի խոսքերը ներկայացվում էին առանց Մուհամմեդի անվան لا اله الا الله وحده لا شريك له, այսինքն՝ «չկա աստվածություն բացի Ալլահից միակ և չկա նրան հավասարը»։ Այս խմբագրությամբ հավատի խոսքերը ընդունելի էին դարձել։

Մոնղոլական տիրապետության սկզբնական շրջանում արծաթ դրամներն առևտրում բարձր էին գնահատվում։ Փոխանակությունը ոսկու և արծաթի միջև

նշվում էր 1 : 6,64 հարաբերությամբ։ Հանդես էին եկել հաշվային նոր միավորներ՝ «բալիշ» և «թուման» անուններով։ Բալիշը թուրանական բառ էր, որ նշանակում էր դրամագլուխ։ Մեկ բալիշը կշռային առումով կազմում էր 500 մսխալ։ Հաշվառքի մեջ գործածում էին ոսկի կամ արծաթ «բալիշ» հասկացողությունները։ Ուգեդեյ խանի (1229—1241) իշխանության տարիներին ամենամեծ հաշվային միավորը թուման բալիշն էր։ Մեկ «թումանը» հավասարազոր էր 10000 դինարի, այսինքն տասը հազար ոսկի դրամի։

Դրամային միավորների արաբերեն հին անունները՝ դինար, դիրհեմ, ֆելս (ոսկի, արծաթ, պղնձից դրամների համար) շարունակվում էին պահպանվել նույն հասկացողություններով։ Սակայն պղնձյա դրամի համար առաջացել էր նաև «դանգ» անունը։ Երբեմն թողարկվում էին ծանր քաշի արծաթ դրամներ, որոնք կոչվում էին արծաթ դինար։ Հարկ է նկատել, որ մոնղոլական տիրապետության վաղ շրջանում միջազգային առևտուրը Հայաստան էր բերում նաև Փոքր Ասիայի սելջուկյան սուլթանների արծաթ դրամները, թողարկված Կայսարիայում, Կոնիայում և Սվասում։

XIII դարի երկրորդ քառորդի գանձերում Ռումի սելջուկյան արծաթ դրամները ներկայացված են նշմարելի առատությամբ։ Հետագայում XIII դարի 50—70-ական թթ. Հայաստանում լայն տարածում են գտնում Հուլաղույան դրամները։ Մանգու խանի եղբայր Հուլաղուն իր զորքերով նվաճել էր Հայաստանը, Արևելյան Վրաստանը, Շիրվանը, Ադրբեջանը, Արաբական և Պարսկական Իրաքները, Խուզիստանը, Փոքր Ասիան և նրան հարևան երկրամասերը։ Հիշյալ բոլոր երկրներում մոնղոլական իշխանությունները թողարկում էին իրենց դրամները։ Կային արծաթ դրամներ Մանգու խանի և նրա եղբոր՝ Հուլաղուի անուններով։ Թողարկվում էին դրամներ հաճախ առանց անունների, որոնց վրա մի կողմից արաբերեն գրված էր. «Արդարադատ խան», իսկ մյուս կողմից՝ մուսուլմանական հավատի խոսքերը։ Երբեմն այդ անանուն դրամների վրա նշվում էին նաև նրանց թողարկման ամսանունները։ Աբաղա խանի (1265—1281) իշխանության տարիներին հայկական քաղաքներում թողարկվում էին պղնձյա դրամներ երեք տարբեր լեզուների արձանագրություններով՝ մի կողմից հայերեն և արաբերեն, իսկ մյուս կողմից՝ ույգուրերեն։ Այդ դրամների վրա պատկերված էր հավասարաթև խաչ, որի անկյուններում կային հայերեն կրճատ գրեր՝ ՏՐ//ԱԾ//ՅՍ//ՔՍ/— «Տեր Աստուած Յիսուս Քրիստոս» և դրանց զուգահեռաբար արաբերեն արձանագրված էին քրիստոնեական հավատի խոսքերը.

(ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴՒՈՅ ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԻԱԾԻՆ)։

Թուրանական լեզվի ույգուրերեն արձանագրությունը ընթերցվում էր ուղղահայաց՝ վերևից ներքև և ձախից դեպի աջ. Խագանու//ներեբեր//Աբաղաուն// Դելեթկեգյուլյուկ//սեն— «Թողարկված է գերագույն խանի անունից և հանդիսանում է Աբաղա խանի դրամը»։ Բացի այդ, ույգուրերեն գրությանը կից գրվում էր նաև քրիստոնեական խաչը։ Քրիստոնեական աղոթքի խոսքերով մոնղոլական արծաթե դրամների շրջանառությունը Հայաստանում հարատևեց մինչև XIV դարի սկիզբը։ Դրանք 90 տոկոս մաքուր արծաթի պարունակությամբ դիրհեմներ էին, որոնց վրա մի կողմից չորս տողով արաբական գրերով արձանագրված էին. بسم الاب و الابن و روح القدس الاه واحد (Յանուն Հօր և

որդւոյ և Հոգւոյն սրբոյ Աստուծոյ միածին) բառերը։ Այդ արձանագրությունն ավարտվում էր քրիստոնեական խաչ նշանով, որ նշված էր փոքրիկ, բայց պարզ ձևով։ Մյուս կողմից, այդ դրամների վրա չորս տողով ույղուրերեն արձանագրված էր, որ թողարկված են մոնղոլական ծագման Հուլաղույան խանի հրամանով։ Արղուն խանի (1284—1291) օրոք ույղուրական դրությանը կից հաճախ դրվում էր նրա անունը՝ արաբերեն գրությամբ, ինչպես նաև դրոշմվում էին կենդանակերպ պատկերներ՝ թռչուն, հովազ, վիշապ, նապաստակ, շուն, ձի և



Հուլաղույան արծաթ դրամներ, XIII դար։

այլ սիմվոլներ՝ կապված թուրանական 12-ամյա տոմարի հետ։ Դիրհեմից բացի թողարկում էին նաև նրա 1/4 մասը ներկայացնող արծաթ դրամային միավորներ։ XIII դարի վերջերին հուլաղույանների վարչական և զինվորական մեծաքանակ ծախսերը բայքայել էին նրանց դրամային տնտեսությունը։

Գայխատու խանի հրամանով, հիջրայի 693 (1293—1294) թ. պաշտոնապես արգելվեց ոսկուց և արծաթից դրամներ թողարկելը։ Խանի հրամանով սկսեցին թողարկվել թղթե դրամներ, որոնք կոչվում էին «չաո»։ Թղթե դրամներին տալով ստիպողական շրջաբերություն, Հուլաղույանները նպատակ ունեին արգելել ոսկու և արծաթի հոսքը իրենց տիրապետության սահմաններից դուրս։ Սակայն այդ արգելքը խափանեց առևտրի զարգացումը, և փոխանակությունն սկսեց կատարվել բնատուր ձևով։ Թղթե դրամները երկար կյանք չունեցան։ Արղեն Ղազան Մահմուդ (1295—1304) խանի ժամանակ հատուկ ռեֆորմով մշակվեց դրամակշռային միասնական սիստեմ և պաշտոնապես ար-

դելվեց այդ սիստեմից տարբեր որևէ այլ կարգի դրամների թողարկումը[1]։ Սահմանվեց դրամների նոր տիպ։ Նրանց վրա նշվում էին պարզ-պա այբուբենի երեք փակագիր տառերը, որոնք հանդիսանում էին Ղազան Մահմուդի անվան կրճատ ձևը։ Արաբերենով նշվում էին մուսուլմանական հավատի խոսքերը՝ նվիրված Ալլահին և Մուհամմեդին, ինչպես նաև իրեն՝ իլխանին։ Մոնղոլական գրությունները առավել լակոնիկ էին դարձել և ազդարարում էին, որ դրամը թողարկվել է Աստծու կամքով Ղազան Մահմուդի կողմից։ Հիմնական

Մոնղոլական (Հուլաղուլյան) և սելջուկյան (Փոքր Ասիայի) արծաթ դրամներ. XIII—XIV դարեր։

դրամային միավորը հանդիսանում էր արծաթ դիրհեմը 2,145 գրամ միջին քաշով։ Թողարկվող արծաթյա դրամների մեջ արծաթի պարունակությունը բարձրացվել էր։

Եթե հին թողարկման հատուկ կլորակների մեջ արծաթը կազմում էր տասը բաժնից յոթը, ապա Ղազան Մահմուդի ռեֆորմով նրանց մեջ 10-ից 9-ը արծաթ էր։ Հին թողարկման արծաթ դրամները հանձնում էին սպեսությանը և փոխարենը ստանում համարյա նույն քաշով նոր թողարկման արծաթ դրամներ։ Բարձրացվել էր նաև ոսկե դրամների որակը։ Հարաբերությունը ոսկու և արծաթի միջև դարձել էր 1 : 12 չափով։ Միաժամանակ կասեցվեց ոս-

[1] Մինչ Ղազան Մահմուդի ռեֆորմը Հուլաղուլյանների տիրապետության մեջ ընդունվում էին տարբեր կշռային սիստեմներով թողարկված դինարներ, որոնք հայտնի էին «խալիֆաթի», «մազրիբի», «միսրի», «փորմուզդի» և այլ անուններով։

կու և արծաթի հոսքը դեպի Հնդկաստան, ուր նրանց փոխհարաբերությունը ընդունում էր 1 : 10 չափով։

Հատուկ հրամանով կարգավորվել էր նաև կշռային սիստեմը։ Ոսկին և արծաթը կշռվում էին թավրիզյան կշռային չափերով, որոնք ճանաչվել էին պետության կողմից իբրև օրինական չափեր։ Բոլոր մնացած կշռային սիստեմները բաղդատվում էին թավրիզյանի հետ։ Դրամային միավորների հին անունները (հասնավորապես արծաթի և պղնձի) չէին փոխվել։ Սակայն ոսկե դրամի համար հանդես է եկել նոր անվանում՝ «ղազանի»։ Վեց արծաթ դրամը հավասարազոր է մեկ արծաթ դինարի, որը կշռում էր մոտ երեք մսխալ։ Ամենախոշոր արծաթե դրամային միավորը հանդիսանում էր երեք դինարը, որը կոչվում էր «միրի»։ Թումանը մնում էր իբրև ամենախոշոր հաշվային միավորը և հավասար էր տասը հազար արծաթ դինարի։ Բազմաթիվ փողերանոցներ մասսայաբար թողարկում էին Ղազան Մահմուդի ռեֆորմով սահմանված նոր դրամներ, որոնց առևտուրը Հայաստան էր բերում Հուլաղույանների տիրակալության տարբեր քաղաքներից։ Շրջանառության մեջ էին արծաթ դրամներ, թողարկված Անիում, Գառնիում, Պարտավում, Նախճավանում, Խլաթում, Արճեշում, Սալմաստում, Էրզրումում, Երզնկայում, Սվասում, Թոխաթում, Սինջարում, Սամսունում, Գյումուշ-Բաղարում, Անկարայում, ինչպես նաև Ղազվին, Ամասիա, Սուլթանիա, Քաշան, Իսպահան, Աստրաբադ, Վասիտ, Մոսուլ, Բաղդատ, Թավրիզ, Մարաղա, Մարդին, Իրբիլ, Շիրազ, Բասրա և այլ քաղաքներում։ Այդ են վկայում Հայաստանում գտնված գանձերը։ Ուշագրավ է, որ Ղազան Մահմուդի (1295—1304) իշխանության տարիներին Անի քաղաքում թողարկում էին պղնձյա դրամներ Քրիստոսի պատկերով, ըստ որում, այդ պատկերը շատ աղճատված էր։ Ույգուրական և արաբերեն գրերով նշված էր, որ դրամը դրվագվել է կարողությամբն Աստուծո, Ղազան Մահմուդի հրամանով։ Առավել շատ թողարկում էին արծաթե կրկնակի դիրհեմներ։ Սակայն Ղազան Մահմուդի ֆինանսական բարենորոգումները երկար կյանք չունեցան։ Արդեն XIV դարի սկզբից արծաթ դրամի կշիռը և նրանում մաքուր արծաթի պարունակությունը նորից սկսեց նվազել։ Փոխվեց նաև դրամների վրա դրոշմրված արձանագրությունների իմաստը։ Ընդունելով շիական դավանանքը, Ղազան Մահմուդի հաջորդը՝ Հուլաղույան Օլջեյդու սուլթանը (1304—1316), դրամների վրա դրոշմել տվեց Ալիի և շիական 11 իմամների անունները։ Թողարկվում էին կրկնակի դիրհեմներ և դինարներ։ Երբեմն, արտակարգ տոնական իրադարձությունների առթիվ, որպես պարգև, թողարկում էին տասը մսխալ (42,6 գրամ) քաշով մաքուր ոսկուց խոշոր շքադրամներ, սակայն դրանք ընդհանուր վիճակի համար բնորոշ չէին։ Դրամային տնտեսության սնանկացումը գնալով բացահայտ էր դառնում։ Արծաթ դրամի միջին քաշը նվազելով, արդեն 1336 թ. դարձել էր 1,43 գրամ։

Ոսկե դրամներ թողարկվում էին շատ քիչ։ Մեկ ոսկյա դրամը (դինար) կշռում էր մեկ մսխալ (4,26 գրամ)։ Քաղաքային կյանքի ներքին մանր առուծախի համար թողարկվում էին տեղական կերտվածքի պղնձյա դրամներ։ Անի քաղաքում XIV դարի սկզբին դրվագում էին արևի և առյուծի պատկերով խաչանիշ պղնձյա դրամներ։ Դրանց վրա գրությունները արտաքնապես նման էին արաբերենին։ Բայց դա միայն արտաքնապես էր։ Իրականում այդ գրություններն արաբերենի անընթեռնելի ընդօրինակություններ էին, կատարված արաբերեն չիմացող տեղացի վարպետների կողմից։ Հարկ է նկատի ունենալ, որ

միջազգային առևտրում արաբատառ արձանագրություններով դրամները տիրապետող նշանակություն ունեին։ Արևմուտքում և Արևելքում քրիստոնեական շատ պետություններ ընդօրինակում էին մուսուլմանական դրամի պատկերատիպը և Ալլահի ու Մուհամմեդի անուններով թողարկում էին ոսկյա և արծաթյա արաբատառ դրամներ։ Այդ իրողությունը հաճախ նրանց դեմ հարուցում էր Հռոմի պապի դայրույթը։ Հետագայում արաբական դրերով արձանագրում էին քրիստոնեական հավատի խոսքերը։

Անի, քաղաքային պղնձյա դրամներ, 1342—1343 թթ.։

Անի քաղաքում Սուլեյման խանի (1339—1344) իշխանության տարիներին թողարկվում էին պղնձյա դրամներ, որոնց վրա Քրիստոսի պատկերի փոխարեն կար մարդկային մի կերպարանք, ծալապատիկ նստած, ձեռքերը դեպի վեր պարզած, շուրջը չորս կողմից հայերեն գրերին նմանվող տառեր։ Այդ տառերը մինչև օրս էլ մնացել են անընթեռնելի։ Ի՞նչ նշաններ են դրանք։ Հա՞կակա՞ն դրեր, թե՞ նրանց նմանվող զարդաձև նախշեր, դեռևս պարզված չէ։ Բայց որ դրանք թողարկվել են Անի քաղաքում 1341—1343 թթ. Սուլեյման խանի անունով, որոշակի երևում է նրանց վրա եղած արձանագրություններից։

Ընչին քաշի այդ փոքրիկ (1,85 գրամ) պղնձյա դրամները, որոնք հայտնաբերվել են Անիում, հնագիտական պեղումների շնորհիվ, Հայաստանում լայն տարածում չեն ունեցել։ Դրանք թողարկվել են քաղաքային շուկայի համար։ Հայաստանի և նրա հետ առնչված երկրների համար կարևոր էին մասսայաբար թողարկվող արծաթ դրամները։ Սակայն XIV դ. երկրորդ քառորդում, արծաթի սղությունը նկատելի էր դարձել, և փողերանոցները արծաթ դրամների հետ թողարկում էին նաև տարբեր արժենիշի դրամներ անագի և պղնձի խառնուրդով։ Արծաթի դինը նորից բարձրացել էր։ Հարաբերությունը ոսկու և արծաթի միջև նշվում էր 1 : 8,88 չափով։ Արծաթ դրամների արժեքազրկման մասին վկայում են այդ ժամանակներից մեզ հասած դիրհեմները։ Այսպես, օրինակ, XIV դարի 30—40-ական թթ. շուրջ տասը տարվա ընթացքում արծաթ

դրամի քաշը նվազելով հասել էր 0,52 գրամի։ Բացի այդ, արծաթ դրամը կիսով չափ այլևս արծաթ չէր, այլ ուներ իր մեջ 48,80—49,35 տոկոս պղնձի խառնուրդ։ Այդպիսի արծաթ դրամներ թողարկում էին Տուղա Թեյմուրի, Ջահան-Թեյմուրի, Սուլեյման և Անուշիրվան խանների իշխանության տարիներին՝ 1336—1350 թթ.։

XIV դարի երկրորդ կեսին, քաղաքական իրադրության փոփոխման հետ կապված, շրջանառության մեջ են մտնում արդեն նոր դրամներ։

## ԱՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԿՏՐՎԱԾ ՀՈՒԼԱՂՈՒՅԱՆ ԴՐԱՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### ՂԱԶԱՆ ՄԱՀՄՈՒԴ ԽԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արծաթ, | երկդրամ, | հիջրայի | 700 (=մեր 1300—1301) | տարեթվով։ |
| » | » | » | 701 (=մեր 1301—1302) | » |

### ՕԼՋԵՅՏՈՒ ԽԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արծաթ, | երկդրամ, | հիջրայի | 707 (=մեր 1307—1308) | տարեթվով։ |

### ԱԲՈՒ-ՍԱԻԴ ԽԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ոսկի, | երկդինար, | հիջրայի | 717 (=մեր 1317—1318) | տարեթվով։ |
| Արծաթ, | երկդրամ, | » | 719 (=մեր 1319—1320) | » |
| » | » | » | 720 (=մեր 1320—1321) | » |
| » | » | » | 723 (=մեր 1323—1324) | » |
| » | » | » | 725 (?) մեր 1324—1325) | » |
| » | » | » | 728 (=մեր 1327—1328) | » |
| » | » | » | 729 (=մեր 1328—1329) | » |

### ՄՈՒՀԱՄՄԵԴ ԽԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արծաթ, | երկդրամ, | հիջրայի | 737 (=մեր 1336—1337) | տարեթվով։ |
| » | » | » | 738 (=մեր 1337—1338) | » |

### ՍԱՏԻ ԲԵԿ ԽԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արծաթ, | երկդրամ, | հիջրայի | 739 (=մեր 1338—1339) | տարեթվով։ |

### ՍՈՒԼԵՅՄԱՆ ԽԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արծաթ, | դրամ, | հիջրայի | 740 (=մեր 1339—1340) | տարեթվով |
| » | » | » | 741 (=մեր 1340—1341) | » |
| » | » | » | 742 (=մեր 1341—1342) | » |
| Պղինձ, | » | » | 742 (=մեր 1341—1342) | » |
| » | » | » | 743 (=մեր 1342—1343) | » |
| Արծաթ, | » | » | 743 (=մեր 1342—1343) | » |
| » | » | » | 744 (=մեր 1343—1344) | » |

ԱՆՈՒՇԻՐՎԱՆ ԽԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արծաթ, | դրամ, | Հիջրայի | 745 (=մեր 1344—1345) | տարեթվով |
| » | » | » | 746 (=մեր 1345—1346) | » |
| » | » | » | 747 (=մեր 1346—1347) | » |
| » | » | » | 748 (=մեր 1347—1348) | » |
| » | » | » | 750 (=մեր 1349—1350) | » |
| » | » | » | 751 (=մեր 1350—1351) | » |
| » | » | » | 752 (=մեր 1351—1352) | » |
| » | » | » | 756 (=մեր 1355—1356) | » |

## ДЕНЕЖНОЕ ОБРАЩЕНИЕ В АРМЕНИИ В IX—XIV ВЕКАХ

Х. А. МУШЕГЯН

(Резюме)

Исследование нумизматического материала Армении IX—XIV вв. дает ценный материал об истории денежного обращения страны, о денежно-весовых системах и главных направлениях торговых связей.

В армянских городах в IX—X вв. обращались куфические дирхемы, выпущенные в различных краях Восточного халифата. Наиболее массовое распространение имели аббасидские монеты, чеканенные как в городах Армении, так и Сирии, Ирака, Ирана. До конца X в. денежное обращение Армении развивалось в сфере внутренней и внешней торговли Арабского халифата. Куфические дирхемы, чеканенные в городах Армении, благодаря международной торговле проникали в экономические центры северо-восточной Европы. В период распада халифата, в связи с формированием на его территории новых феодальных государств, наблюдается прилив куфических дирхемов и других династий.

С конца X в. и особенно в XI в. изменяется состав денежного обращения страны. Отмечается резкое ухудшение качества серебряных монет, о чем свидетельствуют низкопробные дирхемы Шеддадиов. Активную роль начинают играть медные и золотые византийские монеты. Золотые монеты Византии принимались как на внутреннем, так и на внешнем рынке, а медные имели сугубо местное значение. Низкопробность шеддадидских дирхемов уже указывает на первые признаки кризиса серебра, о котором не упоминают письменные источники. В конце XI в. серебро почти совершенно исчезает из денежного обращения. Вместо серебряных монет в XII в. выпускались медные, но с тем же названием «дирхем». Обозначение слова «дирхем» на медных монетах давало последним кредитное значение.

В эпоху так называемого «медного дирхема» в северных областях Армении обращались медные монеты атабеков Азербайджана и Багратидов Грузии, а в юго-западных краях — медные монеты Ортукидов, Зенгидов, сельджуков Ирака, Эюбидов, Данишмендидов, Салдукидов, Бектимуридов и др.

В торговые центры северной Армении с конца первой четверти XIII в. проникают медные грузинские монеты, чеканенные от имени царицы Русудан. К этому времени вновь появляются чисто серебряные монеты—реальные дирхемы, которыми уже в 30-х годах XIII в. отмечается конец «серебряного кризиса». Возобновление выпуска серебряных монет способствовало развитию товарно-денежных отношений Армении с внешним миром. В самом начале в обращение поступали серебряные монеты сельджуков Рума и Чингизидов, а со второй половины XIII в. получают массовое распространение серебряные монеты Хулагуидов, монетные дворы которых функционировали во многих городах Востока, в том числе в наиболее важных торговых центрах Армении.

В статье рассматриваются типологические особенности монгольских монет с армянскими надписями, а также состояние денежного хозяйства Армении при последних Хулагуидах. В конце ее прилагается хронологический список хулагуидских монет, чеканенных в армянском городе Ани